ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01-158/18

«26» հունվար 2018թ.

«ՊՐԵՍ ՍՏԵՆԴ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մատակարար), ի դեմս տնօրեն Է. Խանզադյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության համաձայն, մի կողմից, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բաժանորդ), ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Ալոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության համաձայն, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Մատակարարը պարտավորվում է Պայմանագրով և սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելվածով (այսուհետ՝ Հավելված 1) սահմանված ամսագրերը, թերթերը կամ այլ պարբերականները (այսուհետ՝ Ապրանք) մատակարարել Բաժանորդին վերջինիս կողմից նշված հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95:
2. Ապրանքի անվանումը, բաժանորդագրության տևողությունը, Ապրանքի մատակարարման պարբերականությունը, Ապրանքի քանակը, միավորի արժեքը, ընդհանուր գինը սահմանվում են Հավելված 1-ով:
3. Բաժանորդը պարտավորվում է վճարել սույն պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված մատակարարման ենթակա Ապրանքի արժեքը՝ 235800 (Երկու հարյուր երեսունհինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ: ամբողջությամբ որպես կանխավճար Պայմանագիրը ստորագրելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
4. Պայմանագրով սահմանված վճարման ժամկետների խախտման դեպքում Մատակարարն իրավունք ունի պահանջել Բաժանորդից վճարել տույժ խախտման յուրաքանչյուր օրվա համար Ապրանքի ընդհանուր գնի 1 %-ի չափով:
5. Յուրաքանչյուր ամսվա ընթացքում փաստացի մատակարարված Ապրանքի վերաբերյալ էական պայմանները (քանակ, գին, այլ պայմաններ) սահմանվում են Մատակարի կողմից դուրս գրված հաշիվներով (հաշիվ-ապրանքագրերով), որը հիմք է ընդունվում Կողմերի միջև վերջնական հաշվարկների կատարման համար: Սույն կետում նշված հաշիվը Մատակարարի կողմից Բաժանորդին ներկայացնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Բաժանորդի կողմից գրավոր առարկություն Մատակարարին չներկայացվելու դեպքում հաշիվը համարվում է ընդունված Բաժանորդի կողմից:
6. Պայմանագրի գործողության ավարտին Կողմերը ստորագրում են հանձնման-ընդունման ակտ և/կամ հաշիվ, որով սահմանվում են Պայմանագրի գործողության ընթացքում փաստացի մատակարարված Ապրանքների քանակը և արժեքը, ինչպես նաև լրացուցիչ մատակարարված, չմատակարարված կամ սակագների փոփոխությամբ մատակարարված Ապրանքի քանակը և արժեքը: Սույն կետում նշված հանձնման-ընդունման ակտ և/կամ հաշիվը Մատակարարի կողմից Բաժանորդին ներկայացնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Բաժանորդի կողմից գրավոր առարկություն Մատակարարին չներկայացվելու դեպքում հաշիվը համարվում է ընդունված:
7. Բաժանորդը պարտավորվում է վճարել լրացուցիչ մատակարարված Ապրանքների արժեքը և/կամ սակագների փոփոխությամբ (ավելացում) մատակարարված Ապրանքի արժեքի ավելացված մասը հանձնման-ընդունման ակտի և/կամ հաշվի ստորագրումից 3 (երեք) օրվա ընթացքում:
8. Մատակարարը պարտավորվում է հանձնման-ընդունման ակտի ստորագրումից 3 (երեք) օրվա ընթացքում վերադարձնել որևէ պատճառով չմատակարարված և/կամ սակագների փոփոխությամբ (նվազում) մատակարարված Ապրանքի դիմաց արդեն իսկ վճարված գումարը և/կամ սակագների տարբերությունը:

9. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2018թ.:

10. Բաժանորդն իրավունք ունի միակողմանի հրաժարվել Պայմանագրից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ գրավոր տեղեկացնելով Մատակարարին: Նման դեպքում Մատակարարի կողմից Պայմանագրի դադարումից 3 (երեք) օրվա ընթացքում վերադարձվում է չմատակարարված Ապրանքի դիմաց Բաժանորդի կողմից նախապես վճարված գումարը:

11. Մատակարարն իրավունք ունի միակողմանի հրաժարվել Պայմանագրից՝ այդ մասին առնվազն 15 օր առաջ գրավոր տեղեկացնելով Բաժանորդին: Նման դեպքում Մատակարարի կողմից Պայմանագրի դադարումից 3 (երեք) օրվա ընթացքում վերադարձվում է չմատակարարված Ապրանքի համար Բաժանորդի կողմից նախապես վճարված գումարը:

12. Սույն Պայմանագիրը կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

Մատակարար
ՊՐԵՍ ՍՏԵՆԴ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 18-9
ՀՎՀՀ՝ 02703369
Բանկ՝ Անելիք Բանկ ՓԲԸ,
Հ/Հ 11800071791800

Տնօրեն՝ Է. Խանզադյան

Կ.Տ.

Բաժանորդ
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
ՀՎՀՀ՝ 01501898
Բանկ՝ Ամերիա Բանկ ՓԲԸ
Հ/Հ 1570027609970100
Գլխ. Տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Ալոյան

Կ.Տ.

Հավելված 1
«26» հունվար 2018թ. կնքված
Թիվ 01-158/18 բաժանորդագրության պայմանագրի

Հ/Հ	Պարբերականի անվանում	Բաժանորդագրության տևողություն	Պարբերականություն	Միավորի արժեք	Յուրաքանչյուր համարից մատակա-րարվող քանակ	Ընդհա-նուր գումար (ՀՀ դրամ)
1	Հայաստանի Հանրապետություն	12 ամսյա փաթեթ	Տարեկան 252 անգամ	100	1	25200
2	Հայկական Ժամանակ	12 ամսյա փաթեթ	Տարեկան 252 անգամ	200	1	50400
3	Հրապարակ	12 ամսյա փաթեթ	Տարեկան 252 անգամ	100	1	25200
4	Առավոտ	12 ամսյա փաթեթ	Տարեկան 252 անգամ	200	1	50400
5	Գոլոս Արմենիի	12 ամսյա փաթեթ	Տարեկան 156 անգամ	150	1	23400
6	Նովոյե Վրեմյա	12 ամսյա փաթեթ	Տարեկան 156 անգամ	150	1	23400
7	Փաստ օրաթերթ	12 ամսյա փաթեթ	Տարեկան 252 անգամ	150	1	37800
	Ընդամենը					235800

Ընդամենը՝ 235800 (Երկու հարյուր երեսունհինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

Մատակարար
ՊՐԵՍ ՍՏԵՆԴ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 18-9
ՀՎՀՀ՝ 02703369
Բանկ՝ Անելիք Բանկ ՓԲԸ,
Հ/Հ 11800071791800

Տնօրեն՝ Է. Խանզադյան

Կ.Տ.

Բաժանորդ
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
ՀՎՀՀ՝ 01501898
Բանկ՝ Ամերիա Բանկ ՓԲԸ
Հ/Հ 1570027609970100
Գլխ. Տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Ալոյան

Կ.Տ.